**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1. Սույն օրենքի հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

**թղթակցություն՝** պետական ~~և ծառայողական~~ գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող փաթեթներ, ծանրոցներ, նամակահակեր, ինչպես նաև այլ ծառայողական (այդ թվում՝ ոչ գաղտնի) առաքանիներ, որոնք, սույն օրենքի համաձայն, ենթակա են առաքման.

**սուրհանդակային կապ՝** մեթոդների ու միջոցների ամբողջություն, որն ապահովում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց և պետական մարմինների թղթակցության օպերատիվ առաքումն ու երաշխիքային պահպանվածությունը.

**սուրհանդակային կապի մարմին՝** սույն օրենքով սահմանված կարգով սուրհանդակային կապի բնագավառում գործունեություն իրականացնող մարմին.

**սուրհանդակային երթուղի՝** թղթակցության առաքման համար սահմանված սուրհանդակային կապի մարմնի աշխատակցի ընթացուղին.

**սուրհանդակային կապի ծառայությունների մատուցում՝** թղթակցության (բացառությամբ դիվանագիտական փոստի) ընդունման, մշակման, պահպանման, փոխադրման և հանձնման հետ կապված գործունեություն:

**Հոդված 5. Սուրհանդակային կապի մարմնի գործունեության սկզբունքները**

1. Սուրհանդակային կապի մարմնի գործունեությունն իրականացվում է հետևյալ սկզբունքներով.

1) օրինականության.

2) մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու.

3) պետական ~~և ծառայողական~~ գաղտնիքի, ինչպես նաև օրենքով պաշտպանվող այլ տեղեկությունների պահպանության.

4) թղթակցության առաքման օպերատիվության և երաշխիքային պահպանվածության:

**Հոդված 8. Սուրհանդակային կապի մարմնի պարտականությունները**

1. Սուրհանդակային կապի մարմինը պարտավոր է՝

1) սուրհանդակային կապի ծառայություններ մատուցել սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց և պետական մարմիններին.

2) ապահովել մշտապես գործող սուրհանդակային երթուղիների ցանցի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև հատուկ սուրհանդակային երթուղիների միջոցով թղթակցության օպերատիվ առաքումը.

3) իրականացնել միջոցառումներ առաքվող թղթակցության պահպանման ուղղությամբ՝ ընդհուպ դրա ոչնչացումը, եթե բացակայում է պահպանությունն ապահովելու հնարավորությունը.

4) իր գործունեության ընթացքում կազմակերպել ու ապահովել պետական ~~և ծառայողական~~ գաղտնիքի, ինչպես նաև օրենքով պաշտպանվող այլ տեղեկությունների պահպանությունը.

5) ապահովել սուրհանդակային կապի համակարգի մոբիլիզացիոն պատրաստվածությունը՝ ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում գործելու համար.

6) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում, լիազորված պետական կառավարման մարմնի իրավական ակտերի համաձայն, ապահովել սուրհանդակային կապի մարմնի աշխատակիցների մասնագիտական պատրաստությունը՝ անցկացնելով համապատասխան պարապմունքներ նրանց հետ: